

Սեպտեմբերի 26-29-ը Հայաստանում էր Բեռլինի պետական գրադարանի պատվիրակությունը՝ տնօրեն Բարբարա Շնեյդեր-Կամպֆի գլխավորությամբ: Սեպտեմբերի 26-ին Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը և Գերմանիայի պետական գրադարանի պատվիրակությունը այցելեցին Հայոց ցեղասպանության հուշահամալիր և թանգարան-ինստիտուտ՝ հարգանքի տուրք մատուցելու զոհերի հիշատակին:

Սեպտեմբերի 28-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունենցավ դասախոսություն՝ Բեռլինի պետական գրադարանի տնօրեն Բարբարա Շնայդեր-Կամպֆի և Բեռլինի պետական գրադարանի արևելյան գրականության բաժնի պատասխանատու Մելինե Փեհլիվանյանի մասնակցությամբ: Դասախոսության թեման՝

1. Գերմանական գրադարանային համակարգի ներկայացում /զեկ.՝ Բեռլինի պետ. գրադարանի տնօրեն Բարբարա Շնեյդեր-Կամպֆ/
2. Բեռլինի պետական գրադարանի պատմությունն ու ներկա վիճակը /զեկ.՝ Բեռլինի պետ. գրադարանի տնօրեն Բարբարա Շնեյդեր-Կամպֆ/
3. Բեռլինի պետական գրադարանի հայկական հավաքածուի ներկայացում /զեկ.՝ Բեռլինի պետ. գրադարանի արևելյան գրականության բաժնի պատասխանատու Մելինե Փեհլիվանյան/
4. Համագործակցության հեռանկարներ Հայաստանի ազգային գրադարանի հետ